և կշիռս նոր, ոչ թէ 'ի մտածութեամբ որ բարցցի անուանք 'ի սեպհական բառէ և սովորութենէ Հայոց, քաւ մի՛ լիցի, եթէ ոչ այս նոր անուամբս տացէ տեղի յիշեցուցանելոյ ինձ հարկաւոր տեղին խօսքն իմ և լուս լսողաց և ճառեսցի գործ բանիս Օրինաց, մինչ Տէր այց արասցէ ելցէ բուն վարպետ և գպիր աշակերտեալ և տեղեակ արուաքնոյ գրոց և պատմութեանց և գիտուն և հմուտ բառից և բայից Հայոց և անուանց ամենայն իրաց, որում այժմոյս յինէն իբր կորուսեալ, նա գիցէ հաւաստի անունք 'ի տեղի ըստ իւրաքանչիւր իրին, զի գտցի ամենայն իրաց չափոց և կշռոց և անձանց անունք 'ի մի հողուն և 'ի մէջ Հայոց համահաւասար, զի միաբան ծանիցեն չափու որքանութիւն կշռոյն, և անունք պաշտօնատարաց և այլն, զի մի՛ լիցի իբրև այսօր 'ի միջի մերոյ, որ 'ի ամենայն գաւառի տան զանազան անուն 'ի իրի ըստ սովորութեան իւրեանց, որ անուն իրաց 'ի մի գաւառաց խօսից զանազանի ընդ միմիայնս յոյժ, և դժուարանայ 'ի միտս ամենեցուն, այսինքն անուանք իշխանաց մերոց, որ այժմ ոմն մէլիք, ոմանք ցրվոր ոմն ռէիս, ոմն քեօֆխա, ոմն քալանթար, և անուանք չափարանից մերոց ոմն քիլայ, ոմանք գիրի, ոմանք թաղար, ոմանք թիլանի, և անուանք կշռոց, ոմանք խատիլ, ոմանք լիտր, ոմանք խարվար, և անունք երկրաչափութեան ոմանք ֆար-